# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 03*** *«24» մարտի 2021թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 29*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 24-ի թիվ 3 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 3 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 2.10348 հա էներգետիկայի հողը մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:
4. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:
5. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:
6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.178 հա բնակավայրերի նշանակության այլ հողը աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին:
7. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 22-ի թիվ 26-Ա որոշման բովանդակությունը նոր խմբագրությամբ շարադրելու մասին:
8. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 22-ի թիվ 16 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
9. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Ազնիվ Խաչատուրի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 0.044 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

10. Համայնքի տարածքում սանիտարական հատում իրականացնելու համար «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին թույլտվություն տալու մասին:

11. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

12. Նվիրատվությամբ գույք ընդունելու և Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարվող փոփոխությունը հաստատելու մասին:

13. Վերնաշեն բնակավայրում գտնվող մատուռի բարեկարգման համար ցեմենտ տրամադրելու մասին:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 03*** — ***«24» մարտի 2021թ.***

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 30-Ն*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 04-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ավելացնել եկամտային մասին՝
Կապիտալ ծախսեր այլ աղբյուրներից տրանսֆերտներ հոդվածին 1297.5 /մեկ միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

2. Պակասեցնել գործառնական դասակարգման՝
08.02.03 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածից 850.0 /ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

3. Ավելացնել գործառնական դասակարգման՝
08.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածին 2147.5 /երկու միլիոն հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սարգսյան Է. | | | | |
| Սաֆարյան Ե. | | | | |
| Վարդանյան Գ. | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 03*** *«24» մարտի 2021թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 31*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2.10348 ՀԱ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀՈՂԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի $48^1$ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի և 76-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 2.10348 հա էներգետիկայի հողը /կադաստրային ծածկագիր 10-042-0152-0023/ մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու համար՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու նպատակով:

2. Մրցույթի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 1.5%-ը՝ 162 430 /մեկ հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր երեսուն/ ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-28-րդ հոդվածի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգով /բաժին VIII/ կազմակերպել հողամասի կառուցապատման մրցույթ և մրցույթի մասին հայտարարություն տալ Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |

| | | | |
|---|---|---|---|
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 03*** ***«24» մարտի 2021թ.***

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 32*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու համար՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-28-րդ հոդվածի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգով /բաժին VIII/ կազմակերպել հողամասի վարձակալության մրցույթ և մրցույթի մասին հայտարարություն տալ Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 24-ի թիվ 32 որոշման

# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/Հ | Գլաձոր համայնքի բնակավայրը, որի վարչական տարածքում գտնվում է հողը | Հողատեսքի | | Կադաստրային ծածկագիրը, վկայական N | Չափը /հա/ | Լոտը | Մեկնարկային գինը, կադաստրային արժեքի տոկոսը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | | | | |
| 1 | Գետափ | Գյուղատնտեսական | Վարելահող | 10-014-0056-0066, N 04032021-10-0013 | 0.06593 | 1 | 31 650 /երեսունմեկ հազար վեց հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ ՝ զուտ եկամտի 1000%-ը |
| 2 | Գետափ | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 10-014-0166-0088, N 22022021-10-0021 | 1.04606 | 1 | 26 150 /քսանվեց հազար հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ զուտ եկամտի 1000%-ը |
| 3 | Գետափ | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | 10-014-0166-0089, N 22022021-10-0020 | 1.046 | 1 | 26 150 /քսանվեց հազար հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ զուտ եկամտի 1000%-ը |

Համայնքի ղեկավար՝ Ա. Մովսիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 03*** *«24» մարտի 2021թ.*

### *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33-Ա*

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ ՊԱՐԶ ԳՐԱՎՈՐ ՁԵՎՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշումը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 600 հա արոտավայրը պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրելու համար՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 24-ի թիվ 33 որոշման

# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՊԱՐԶ ԳՐԱՎՈՐ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿ

| Հ/Հ | Գլաձոր համայնքի բնակավայրը, որի վարչական տարածքում գտնվում է հողը | Վարձակալը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Արոտավայրի չափը /հա/ | Վարձավճարի չափը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վերնաշեն | Մրազ Համզոյան | 1 ամիս | 500 | 50 000 /հիսուն հազար/ |
| 2 | Գլաձոր | Տիգրան Եղոյան | 3 տարի | 100 | 111 000 /մեկ հարյուր տասնմեկ հազար/ |

Համայնքի ղեկավար՝ Ա. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք*

*Նիստ թիվ 03* — *«24» մարտի 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 34

### ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.178 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ թույլտվություն Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.178 հա բնակավայրերի նշանակության այլ հողը /կադաստրային ծածկագիր 10-014-0056-0080/ աճուրդով օտարելու համար:

2. Աճուրդի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ը՝ 2 173 380 /երկու միլիոն հարյուր յոթանասուներեք հազար երեք հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել աճուրդ-վաճառք և աճուրդի մասին հայտարարություն տալ Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք*


***Նիստ թիվ 03*** *«24» մարտի 2021թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 35-Ա*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 22-ի՝ «Տեղական վճարի գծով արտոնություն սահմանելու մասին» թիվ 26-Ա որոշման բովանդակությունը խմբագրել ստորև բերված նոր խմբագրությամբ․

«Սահմանել որ.

Գլաձոր համայնքի մանկապարտեզներ հաճախող զոհված զինծառայողների ընտանիքի անդամների (երեխա, եղբայր, քույր) ծնողական վճարի /վարձավճար, տեղական վճար/ նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ զրոյական դրույքաչափ:»:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | | | |
| Գասպարյան Ք. | | | |
| Գևորգյան Ա. | | | |
| Լևոնյան Վ. | | | |
| Մանասերյան Կ. | | | |
| Մարգարյան Ա. | | | |
| Մարգարյան Գ. | | | |
| Մարտիրոսյան Մ. | | | |
| Սարգսյան Է. | | | |
| Սաֆարյան Ե. | | | |
| Վարդանյան Գ. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 03*** *«24» մարտի 2021թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 36*

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 16 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայքի ավագանու 2021 թվականի փետրվարի 22-ի՝ «Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.87213 հա հատուկ նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 16 որոշման բովանդակությունից հանել «գինու գործարան կառուցելու համար» բառերը:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

*Նիստ թիվ 03* *«24» մարտի 2021թ.*

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 37-Ա

## ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ԱԶՆԻՎ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.044 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 17-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի մարտի 5-ի N 32 դրական եզրակացությունը՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Ազնիվ Խաչատուրի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.044 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-014-0022-0020/ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատեսքը փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 03*** *«24» մարտի 2021թ.*

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետի դրույթներով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Գլաձոր համայնքի տարածքում սանիտարական մաքրում իրականացնելու նպատակով շահագործվող տեխնիկայի տեղաշարժի համար «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին տալ թույլտվություն՝ համայնքի /բնակավայրերի/ տարածքում իրականացնելու սանիտարական հատումներ:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | /ստորագրություն/ | | |
| Գասպարյան Ք. | /ստորագրություն/ | | |
| Գևորգյան Ա. | բացակա | | |
| Լևոնյան Վ. | բացակա | | |
| Մանասերյան Կ. | /ստորագրություն/ | | |
| Մարգարյան Ա. | /ստորագրություն/ | | |
| Մարգարյան Գ. | /ստորագրություն/ | | |
| Մարտիրոսյան Մ. | /ստորագրություն/ | | |
| Սարգսյան Է. | /ստորագրություն/ | | |
| Սաֆարյան Ե. | /ստորագրություն/ | | |
| Վարդանյան Գ. | բացակա | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք


*Նիստ թիվ 03* — *«24» մարտի 2021թ.*

*ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 39-Ա*

## ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի պահանջը, Գլաձոր համայնքի ավագանու «Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի» մշտական հանձնաժողովի 2021 թվականի մարտի 24-ի դրական եզրակացությունը՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Տալ համաձայնություն կամավոր խնդրի լուծման իրականացմանը և Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից համայնքի բնակիչներին տրամադրել ֆինանսական օգնություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզի
Գլաձոր համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 24-ի թիվ 39-Ա որոշման

# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել.

**1. Սոցիալապես անապահով վիճակում գտնվող և առողջական խնդիրներ ունեցող բնակիչներ՝**

1) Անահիտ Գրիգորյան՝ Գետափ բնակավայր –20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ
2) Վարդիկ Մկրտչյան՝ Գետափ բնակավայր –20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ
3) Ռազմիկ Հարությունյան՝ Գետափ բնակավայր –60 000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ
4) Աղավնի Թադևոսյան՝ Գլաձոր բնակավայր –15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
5) Մարտիկ Դանիելյան՝ Գետափ բնակավայր –70 000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ
6) Մարգարիտ Պարսամյան՝ Վերնաշեն բնակավայր –30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
7) Զոհրաբ Գրիգորյան՝ Գետափ բնակավայր -30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
8) Հենրիկ Նազարյան՝ Գլաձոր բնակավայր – 10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ
9) Անժելա Սարգսյան՝ Վերնաշեն բնակավայր -15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
10) Աննա Մնացականյան՝ Գլաձոր բնակավայր -30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
11) Արամ Գրիգորյան՝ Գլաձոր բնակավայր- 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ
12) Մանուշակ Խաչատրյան՝ Վերնաշեն բնակավայր- 30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ
13) Սոֆիկ Սայադյան՝ Գլաձոր բնակավայր-15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ
14) Արսեն Գալստյան՝ Գլաձոր բնակավայր- 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ
15) Ռուստամ Նազարյան՝ Գլաձոր բնակավայր- 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:

**2. Համայնքում նոր ծնված երեխաներ ունեցող ընտանիքներին՝**

1 ) Վասիլ Գևորգյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
2) Արա Դավթյան՝ Գլաձոր բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
3) Ռուզան Մարտիրոսյան՝ Գլաձոր բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
4) Սիրակ Ավետյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
5) Ազատ Վարդանյան՝ Գլաձոր բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
6) Կարեն Հովսեփյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
7) Նաիրի Գրիգորյան՝ Գլաձոր բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
8) Վարդուհի Հովհաննիսյան՝ Գլաձոր բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
9) Իզաբելա Պողոսյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
10) Աշոտ Հովսեփյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
11) Ալիկ Միրզոյան՝ Գետափ բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
12) Վահե Արամյան՝ Վերնաշեն բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ
13) Կարեն Արամյան՝ Վերնաշեն բնակավայր – 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

**Ընդամենը՝ 780 000 /յոթ հարյուր ութանասուն հազար/ ՀՀ դրամ:**

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Մովսիսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք


***Նիստ թիվ 03*** *«24» մարտի 2021թ.*

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 40*

## ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմադրամից որպես նվիրաբերություն ընդունել վերջինիս կողմից «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակներում Գլաձոր համայնքի Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերում կառուցված փողոցների արտաքին լուսավորության համակարգերը՝ ընդհանուր 12 231 144 /տասներկու միլիոն երկու հարյուր երեսունմեկ հազար հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ արժողությամբ:

2. Հաստատել Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարվող փոփոխությունը:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature, stamp] Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46* Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

***Նիստ թիվ 03*** ***«24» մարտի 2021թ.***

## *ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 41-Ա*

## ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՏՈՒՌԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՑԵՄԵՆՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ավագանու անդամ Գեղամ Մարգարյանի կողմից Վերնաշեն բնակավայրի 18-րդ փողոցում գտնվող մատուռի բարեկարգման աշխատանքներն իրականացնելու վերաբերյալ ներկայացված առաջարկը՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի հաշվեկշռում առկա ցեմենտից 15 /տասնհինգ/ պարկ տրամադրելու քաղաքացի Գեղամ Մարգարյանին՝ Վերնաշեն բնակավայրի 18-րդ փողոցում գտնվող մատուռի բարեկարգման աշխատանքներն իրականացնելու համար:

2. Օգտագործված ցեմենտի վերաբերյալ քաղաքացի Գ. Մարգարյանից պահանջել ներկայացնելու գրավոր հաշվետվություն:

| Ավագանիներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գաբրիելյան Ա. | [signature] | | |
| Գասպարյան Ք. | [signature] | | |
| Գևորգյան Ա. | [signature] | | |
| Լևոնյան Վ. | [signature] | | |
| Մանասերյան Կ. | [signature] | | |
| Մարգարյան Ա. | [signature] | | |
| Մարգարյան Գ. | [signature] | | |
| Մարտիրոսյան Մ. | [signature] | | |
| Սարգսյան Է. | [signature] | | |
| Սաֆարյան Ե. | [signature] | | |
| Վարդանյան Գ. | [signature] | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** [signature] **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**